

օրինակ՝ «հարկ է» արտայայտութեամբ: *Անպայմանական հրամայականը* նաեւ կը տարբերի իր նախորդէն, իր կամքին վրայ գործող ստիպողութեամբ կամ հարկադրանքով, առանց որեւէ պայմանի:

Անպայմանական հրամայականը⁽⁶¹⁾ (Categorical Imperative) մանրամասնուած է, այս տեսութեան բաժնին մէջ:

5. Ի՞նչ է՝ *նսկեայ կանոնը*

Որպէս գործնական բարոյագիտութեան հիմնական սկզբունք, *նսկեայ կանոնը* ծանօթ է հնադարեան ժամանակներէն ի վեր, իր հետեւեալ դրական ու բացասական բանաձեւերով.-

- «Այլոց հանդէպ վարուէ՛ այնպէս, ինչպէս որ կ'ուզես, որ անոնք քեզի հետ վարուին».
- «Ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն, դուն ալ (այդ) ուրիշներուն մի՛ ըներ»:

Պատմութեան ընթացքին, կարելի է հանդիպիլ *նսկեայ կանոնի* բազմաթիւ նմանօրինակ բանաձեւերու, որոնք կու գան ասիական կրօնա-փիլիսոփայական տարբեր ուղղութիւններէ.- կոնֆուցիականութիւն (Confucianism), հին-դուականութիւն (Hinduism), բուդդայականութիւն (Buddhism) եւ զրադաշտականութիւն (Zoroastrianism): Այնուհետեւ *նսկեայ կանոնի* տարբերակներ կը տեսնենք յունական հին մշակոյթի եւ փիլիսոփայութեան մէջ, ինչպէս նաեւ զանազան կրօններու մօտ.- Յուդայականութիւն (Judaism), Թրիստոնէութիւն (Christianity) եւ Իսլամութիւն (Islam):

Որպէս օրինակ նախ պիտի յիշեմ չին կրօնափիլիսոփայ Կոնֆուցիոսը (Confucius, 551 – 479 մ.թ.ա.), որ ըսած է՝ «*Վարուէ՛ այնպէս, ինչպէս որ կ'ուզես որ քեզի հետ վարուին*»: Ապա յիշենք՝ քրիստոնէական բարոյագիտութեան մէջ, Յիսուսի նշանաւոր մէկ խօսքը.- «*Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէք դուք անոնք*» (Մտ. 7/12):

Տարբեր մշակոյթներու մէջ օգտագործուած *նսկեայ կանոնի* բանաձեւերը կը նշեն մարդկային յարաբերութեան նուազագոյն համաձայնութեան մը գոյութիւնը, որ բարոյական ուղենիշ դարձած է:

Մանաւանդ Լուսաւորութեան Դարաշրջանէն սկսեալ, փիլիսոփայութեան ոլորտէն ներս կը տեսնենք բազմաթիւ դրական կամ բացասական քննադատութիւններ՝ *նսկեայ կանոնի* առնչութեամբ: Քննադատները *նսկեայ կանոնը* կը նկատէին բարոյագիտութեան ոչ պիտանի կամ պակասաւոր: Կանոն մը, որ ամբողջացման եւ յստակեցման կարիքը ունի, որովհետեւ ինքնին բարոյական որեւէ կանոն չի բովանդակեր ու երբեք չի բացայայտեր վարմունքի մը *ճիշդ* կամ *սխալ* ըլլալը: *Ոսկեայ կանոնը* ենթադրական բնոյթ կը կրէ եւ սերտօրէն առնչուած է խնդրոյ առարկայ անհատին:

(61) **Անպայմանական հրամայականը** (Categorical Imperative) մանրամասնուած է այս տեսութեան քննարկման ընթացքին, էջ 168: